

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (շաբթի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր

1903 թվին

12	ամսվանը	10	ռուբլի
11	»	»	»
10	»	»	»
9	»	»	»
8	»	»	»
7	»	»	»
6	»	»	»

Մնացածները ամսական 1 »

Եւրոպայում 30 ֆր., Ամերիկայում 6 դոլլար,

Պարսկաստանում 10 ր.

Հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկրի մասաւոր ոյժերէն.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակոսեայ զրոյց. Դրական տեսութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի լրագրութիւն. Արտաքին լուրեր.—ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—Մանրակար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Էլի Գիթ Եթարը. Մամուլի յօդուքներ:

ԵՐԿՐԻ ՄՏԱՒՈՐ ՈՅԺԵՐԵՆ

Ձեզ ենք դիմում, երկրի մասաւոր ոյժերէն, ձեզ, որ երկրի աղբիւր պէտք է կազմէք, ձեզ, որոնց վրա է դրել իր նուիրական յոյսերը մեր հասարակութիւնը:

Մեծ է ձեր պատասխանատուութիւնը, ծանրակշիռ են ձեր պարտականութիւնները այդ հասարակութեան առաջ:

Դժուարութեամբ և զոհաբերութիւններով հասարակութիւնը ծնեց և զարգացրեց ձեզ: Այդ հասարակութիւնը, լի-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Գ Ի Ժ Ե Թ Ա Ր Ը

(Պատկեր)

Ամենքին յայտնի գիթ Եթարը, որի անհանգիստ աչքերը, շարժուն դէմքը, հայտնաբերելով ու անէծքներով լի կցկտուր ու անիմաստ բառերի հեղեղը և ծիծաղ էին շարժում և կարեկցութիւն, երբեք այնչափ յուզված, այն աստիճան վրդովված չէր երևացել, որքան այժմ, ճրագալոյցի հանդիսաւոր այս վայրկեանին:

Գիտում էր նա շտապ, առանց այս և այն կողմը նայելու, ամենքին լսելի բարձր ձայնով հայտնաբերել, անէծքներով թափելով:

Գիտում էր նա, իր զգալով յունկարի երեկոյեան փչող ցուրտը, հողաթափների թաղանթաձեւերից ստացած ու գետնին կպած ձիւնի հետ անմիջապէս հաղորդակցվող մատների սառնութիւնը:

Գիտում էր նա առանց ուշադրութիւն դարձնելու կապերի և ժամաւորների այն հոսանքի վրա, որ ճրագալոյցի երեկոյեան, ժամերգութիւնից յետոյ, շտապում էր տուն, ճոխ սեղան նստելու, խորտկիւնքով թաթախում կատարելու:

Բայց ինչու նա հայտնում էր, ինչու կեղտի մէջ կորած, մաշված, քրքրված կանացի գգեստի տակից մի կարճուկ մարմին փոխանակ մարդկանց գուլթը շարժելու, իր դէմ էր դրուհրում նրանց:

Գիթ Եթարը, գիթ Եթարը, յանկարծ լսվեց մի աղմուկ և տօնական զգեստներով եկեղեցուց տուն դարձող շարածնի մանուկների մի խումբ չընդադառնալ բաղդի այդ հալածվածին, երբ նա, մեծ փողոցից թեքվելով դէպի աջ, մտաւ մի նեղ, ծուռ ու մուռ փողոց, որ տա-

նելով խաւար անցեալի ժառանգ, զգում էր, որ իր որդիներին պէտք է կրթէ և զինէ գիտութեամբ, որպէս զի կեանքը բարեփոխվի և բեղմնաւորվի ապագայում: Ինչ էք արել դուք և ի՞նչ էք ծրագրում կեանքի համար—ահա մի խոշոր հարց, որը պատասխան է պահանջում ձեզանից:

Լաւ գիտեցէք, որ դուք հասարակութեան մեջ գործող տարրեր էք, ուստի և ձեզ վրա ծանրանում է էական և անխուսափելի պատասխանատուութիւն:

Ժողովուրդը իր գոյութեան կուսի մէջ զգում է, որ նրա շուրջը երեւան են եկել մի շարք ազդեցութիւններ, որոնց դէմ մայրաւորում համար անհրաժեշտ են նոր զենքեր և միջոցներ: Կամ պէտք է նա կարողանայ այդ զենքերը և միջոցները ձեռք բերել և այդպիսով յաղթող հանդիսանալ կեանքի մէջ, կամ այլապէս պէտք է նա յետ նահանջէ, ընկճվի և մասնէ իրան ոչնչացման: Այստեղ, ուր սկսել են գործել մեքենան, շողին, երկտարականութիւնը, գիտնական դիրքը, խոշորացողը, ընդհանր լարօրատօրիան և ամեն տեսակ լամբական կազմակերպութիւններ, այստեղ է կարելի անփոխել և անհոգ մնալ. ամեն մի օրը և ամեն մի տարին ունեն ճակատագրական նշանակութիւն: Իսկ ի՞նչ էք անում դուք:

Մեղք է մեր երկիրը, մեղք է մեր ժողովուրդը: Երկիրը ունի անթիւ և բազմազան հարստութիւններ, որոնք սպասում են մշակողներին: Ժողովուրդը ունի անպայման խոշոր կուլտուրական ընդունակութիւններ, որոնք կարող են հրաշքներ կատարել, երկիրը շէնացնել և բաղաւոր կեանք ստեղծել մեր բոլորի համար:

Ձեր մէջ, իբրեւ մտաւոր ոյժերի մէջ, գոյութիւն ունի ստեղծագործող տարր, որը դուք պարտաւոր էք դորձ դնել մեր

նում էր դէպի Զօրավար եկեղեցին: Հռոնոցներէն և քրքիչների միջից դուրս եկաւ Եթարը, ճերմկած և դեղնած մազերը հազիւ ծածկող մաշված թաշկինակը մի կողմ ծռած: Նրա անդադար տեղացող հայտնաբերելու աւելի էլ զուարճութիւն պատճառեցին այդ չարածնիներին, որոնք, գետնից պոկելով ձիւնի սառած կոշտերը, չարտեցին նրա վրա: Կարծեք բոլորովին չը զգալով այդ հարուածները, նա շարունակում էր հայտնել և առաջ գնալ, իւրաքանչիւր մի քանի քայլի վրա հանդիպելով նոր-նոր խմբերի, նոր-նոր ծաղրի, նոր-նոր հարուածներով: Զարածնիների այսպիսի կատակը անհոգ բազմութեան այնքան էլ տարօրինակ չը թուաց. նա էլ կարծեք մասնակցեց այդ զուարճութեան, նրա չըթուանքներից էլ գիթ բառը արտասանեց, նրա դէմքի վրա էլ ժպիտ խաղաց, իսկ նա, բաղդի այդ հալածվածը շտապում էր առաջ:

«Եթար», յանկարծ հասաւ նրա ականջին կանացի մի ձայն, երբ ժամաւորների հոսանքը աստիճանաբար նուազելով, նա արդէն մօտեցել էր եկեղեցուն: Ձայնը ծանօթ էր և նա չուր եկաւ Դա Թեյլուն էր, մի ողորմած պառաւկին, որ իր աղքատիկ սեղանից միշտ բաժին էր հանում գիթ Եթարին: Եւ գիթ Եթարը ամբողջ քաղաքում երկու թէ երեք այդպիսի բարեկամներ ունէր, որոնք կարեկցութեամբ կանչում էին նրա անունը առանց զգիժա բառի, կարծեք մեղմունք նրա կրած վիրաւորանքների դառնութիւնը:

—Առ, որդի, հէրէք է ման գաս, առ էս թիւք հացը, քնա հանգստացիր, աղիւղ օր է:—Այս խօսքերի հետ պառաւ Թեյլուն պարզեց գիթ Եթարին մի կապույ:

—Գար ու ընդդ ընի, աւերակ թող դառնայ, ամենքը, ամենքը թող կոտորվին:—Կպողը լսելով նորից անիծեց գիթ Եթարը և հեռացաւ, առանց մի խօսք խօսելու: Նա մտաւ եկեղեցի այն ժամանակ, երբ ոչ

երկրի բարօրութեան համար: Եթէ դուք այդ չանէք, դուք դաւաճաններ էք երկրի դէմ, դուք յանցաւորներ էք նրա ազգաբնակչութեան առաջ, դուք զանցառու էք պետութեան առաջ:

Յիշեցէք, որ դուք կոչված էք երկրի աղբ լինելու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՅԻՈՐԵՆԱՅ ԶՐՈՅՑ

Ծնունդ...

Դարձեալ այդ մի հատ բառը, մի վանկը: Այսօր էլ նա ձեզ կրկնում է յաւիտեան սրտառու, իր աննման պարզութեան մէջ չքնաղ պատմութիւնը: Հրէաստանի մի խուլ անկիւնում, ձմեռնային մի գիշեր, մանուկ ծնվեց անասունների ախոռում և դրվեց մոտերի մէջ:

Դիտեցէ թէ ով էր նա: Հազարաւոր տարիներ մարդկութիւնը սովորել է թէ ով էր նա: Հազարաւոր տարիներ միջով անցնում, հասնում է մեզ այսօր էլ այն լոյսը, որ առաջին անգամ ծագեց Բէթլէհեմի այրից: Մենք տօնում ենք այդ սուրբ գիշերը, այդ մեղմ ու հեղ լոյսը, որ փայլեց դարերի խաւարի մէջ և նշանակված էր մարդկութեան խաւար սրտի համար:

Համայնարհային ամենամեծ, ամենալուսնաւոր մոտերից մէկը, Ո՛վ է անտարբեր, անգիտակալաւոր օրը: Վերանորոգվում է Բէթլէհեմի այրի հրաշալի պատմութիւնը և արձագանք է տալիս թէ զբաղաւոր սոսկալի խորժիթում թէ լոյսերով ողորկված պալատների մէջ Որքան մոգեր են բարձրանում մարդու մէջ, որքան յաւիտեանական խորհուրդներ են բացվում նրա աչքի առաջ:

Այնպիսի տօնում է, այնպիսի աղմուկի, իրարանցման մէջ է: Այժմ ու ականջը հարկաւորաւոր, հազարաւոր փաստերով վաւերացնում են, որ կենդանի է Բէթլէհեմի մանուկի յիշատակը:

ոչ չը կար եկեղեցուն, բացի մէկ երկու կանանցից, որոնք դեռ հերթով մօտենում և համբուրում էին պատերից քարը արած իւրաքանչիւր պատկերը: Նա մօտեցաւ փողոցի եկեղեցուն մի սիւնից քարը արած Աստուածածնի պատկերին, որի առաջ վառվում էին մի խորժ մոմեր և պոկեց նրանցից մէկը:

—Գողացաւ, գիթ Եթարը մոմերը գողացաւ: Ուշացած կանացի այս ձայնի վրա հանդերձանից դուրս եկաւ ժամկոչը հայտնաբերելով և աղմուկ, բայց Եթարը արդէն դուրս էր քնացել եկեղեցուց:

Այս միջոցն էր ընտրել նա եկեղեցուն կից աղքատիկ մի բակում վարձքի համար տրված աղքատիկ բնակարանը, գոնէ այս տօն օրը, լուսաւորելու համար:

—Մամէ ջան, դէր ես, անթիւ ենք, միտում ենք:

Մանկական այս թոթովանքների հետ երկու կիսամեկի, ցրտից կապտած՝ վեց-եօթ տարեկան փոքրիկ մանուկների առաջ վազելը և Եթարի փէշերից քարը ընկնելը մէկ եղաւ, երբ նա վառած մոմը ձեռքին ամբողջ ոյժով ծանր ու կոպիտ դուռը հրելով ներս մտաւ: Փողբիկ մեղրամոմի նուազ լոյսը երևան հանց նկուղի սոսկալի անկիւններից: Կրակ չը կար. լուսամուտներից դուրս, լեռ քարերից չինված չորս մերկ պատերի և սեացած առաստաղի տակ, երևում էր մի մաշված փայլաւ, զգգված մի վերմակ և մոխրով լի մի խեցի:

Եթարը, մօտենալով դիմացի պատին և լեռ քարից կպցնելով մեղրամոմը, որի փողբիկ բոցը անվստահութեամբ դալիս էր մեղմելու գերեզմանային այդ ցուրտն ու խաւարը, բացեց ու դրեց փայլաւ վրա ձեռքի կապոցը և վերցնելով խեցին դուրս գնաց:

Դրո՛ր օղբ լցված էր իսկի և տօնական խորտկիւնքի անուշահոտութեամբ. այս և այն տեղ լուսամուտներում նկատելի էր սովորականից աւելի ճրագի լոյս, փողոցներում երթեկու-

որ մարդիկ անչափ սիրում են նրան: Բայց ինչ է ասում սիրտը:

Մ, սիրտը ուրիշ բան է: Նա չէ հաշտվում աչքի ու ականջի հետ այս հանդիսաւոր օրերին, այս տօնական լայնցող ժխորի մէջ:

Ահա ինչում է գիշերային խաւարը: Հեղ ու մեղմ է երկինքը. աստղերը ճապում են մի առանձին խորհրդաւորութեամբ, կարծես ուղում են զգալ տալ, թէ ձիւտ մի այդպիսի գիշեր էր, երբ նրանք, այդ յաւիտեանական ակա-նատեաները, վիայ եղան, որ աշխարհ եկաւ մարդկութեան մեծագոյն գաղափարը և դրվեց մոտերի մէջ:

Երկնքի այդ խաղաղութեան տակ բարձրացել, լեռնաշղթա է աշխարհի հրճուածը: Հրճուածի անզուսպ ցոյցեր են բարձրանում դէպի աստեղ-առու, իր աննման պարզութեան մէջ չքնաղ պատմութիւնը: անհամար ծրագները լուսաւորում են կամարների տակ խաղած խաւարը և հազարաւոր կայտառ, չարածնի խաղեր են խաղում ոսկուց հիւսած զգեստների, թանաքաքին քարերի, քարերի վրա: Ինչ որ կայ թանգ, հազուադէպ, չլացուցիչ հանդէս է բերվել Օրերով, շաբաթներով մարդիկ կարում էին, պատրաստում էին, լուսավորում էին: Ինչ հնարել է մարդը՝ իր մարմինը գեղեցկացնելու, չեղ ու վայելուչ ցոյց տալու համար, գործի է դրված: Ոչինչ չեն խնայել. մի առանձին ախոռ-ժամբող էին դրամի քանակները բացվում և դաստակարանում ու չուներ, պարտք էր վերցնում մի մեծ, սրբազան հանդերձ: Լցվեցան շուկաները, նորից և նորից դաստակվեցան Առնելը, տուն տանելը, կուտելը մի մոլեգին տնտեսում էր կատարվում: Եւ այդ բոլորը այս երեկոյի համար, այս անմահ տարեդարձի համար, երբ ամեն մի բերան արտասանում է, Մանուկ ծնվեց մոտերի մէջ:

Թիւնը դադարել էր, միայն երեմն, երեմն երևում էին ժամաշափերի կազած «Աւետիս» ման եկող խմբեր, որոնք Գիթ Եթարը, գիթ Եթարը գոչելով անցնում էին: Եթարը վերադարձաւ այն ժամանակ, երբ ամբողջ օրով քաղցած մնացած մանուկները հացի մէջ լցած փլաւի վերջին հատիկներն էին մաքրում, իսկ փողբիկ մեղրամոմը սպառվելու վրա էր:

Մանուկները վազեցին դէպի խեցին, որի մէջ փայլում էին մի քանի վառված ածուխներ:

Մինչև որ Եթարը կը մօտենար վերցնելու իւղտո հացի մնացորդը, մեղրամոմը սպառվեց, լեռ քարից պոկվեց պատրոյգի վերջին մնացորդը, վայր ընկաւ գետին և վայրկեանապէս խաւարի մէջ նշմարվեցին խեցիի կրակները:

Անպաւանի խաւարը չը վախեցրեց փողբիկ մանուկներին: այդպիսի խաւար երեկոյեան այդ ցուրտ նկուղում շատ անգամ նրանք անց էին կացրել և լուռ մնացին, բայց Եթարը, այդ գիթ, բողբոջ հոգին, չը կարողացաւ լսել: Բռնկվեց նա, անէծքներ, հայտնաբերելով, անպատակ անց ու դարձ անելով խաւարի մէջ: Գիթ Եթարը վրդովմունքին չափ չը կար այն ժամանակ, երբ աշխարհը ամեն հոգւ մոռացած, իրան տված կեր ու խուսի, աւելի էր չօշակիւղ դարձնում թշուառութիւնը:

Բացի այդ Եթարը երթալայ էր անվերջ ծաղրի, ծանր վիրաւորանքների Ամենքից հալածված այդ թշուառը անէծքներով միայն պիտի մեղմէր իր վրդովմունքը:

Այդպիսի օրերին նա բոլորովին հանգիստ չուներ, թափառում էր ամբողջ օրը, չը զգալով ոչ քաղց և ոչ էլ յոգնածութիւն, միայն երկեղեցուն վերադառնում էր տուն, միտ բերելով այն երկու մանուկներին, որոնց վերցրել էր խնամելու բնագործին, առանց ըմբռնելու այս բարի գործի վնասութիւնը: Դեռ շատ ջանք ժամանակ, ամուսինը կորց-

Խաղաղ ընթացում է գիշերը, աստղերը առերի խորհրդավոր կերպով են ձգալուստ իրեն դա-
րաւոր վիճակում իսկ երկրի վրա ցոյցերը առերի
և առերի ազդեցությունը, առերի բարձրագույն են դառ-
նում կանգնած է առատ, անվերջ կեր ու
խումբի միտքը Հազարաւոր խոհանոցներ մը-
ցութեան մէջ են. ով շատ, ով ակորմերի, հա-
մուսի Խորհրդանշանքը, ձուլն ու իւրը, գիշին
ուտող ու խոզը են կանգնում Միայն փոր լինի
որ տեղաւորէ, որ չը ձգվիլի Եւ ունում է
երկրի սեղանների ձոխութիւնից: Որքան երգ,
որքան ազմուտ, որքան ծիծաղը, Լուսն բերան չը
կայ, լուսն երաժշտական գործիք չը կայ: Ար-
ձակված են կապերը, կտրված են ամսները:
Ամեն ինչ ներքի է այս սուրբ, անմահ գիշերը:
Եւ ցնծութիւնների այդ համատարած ծովի
վրա բարձրանում է մի բարձրագույն, հաւաք
էակը: Երկնիկ է նա, անչափ երջանիկ: Նրա
գէտը մի մեծ ժպիտ է. խորին բաւականու-
թիւնից նրա կտրված պատմելի է ուղու-
նակը լաւ վիճակ նա չէ էլ երեւակայում եր-
կնքին է նայում իր հիացած, գէտը, դողում
է հաճութիւն, անբույս ուրախութիւնից: Եւ
լայն տարածելով իր թևերը աշխարհի վրա,
ապում է աստեղադարձ տարածութեան, «Տես-
նում ես, բոլորը, այս բոլորը քեզ և միայն քեզ
համար... Տեսնում ես, ամեն ինչ կայ, ամեն
ինչ իր տեղը, տարեցտարի ոչինչ չէ պակա-
սում, տարեցտարի աւելանում է քո աօնի չքե-
ղութիւնը, փառքը»:
Ով է նա?

Մարդկային ծէսերի ոգին Ինչքան չաղ է
նա, ինչքան առողջ է և ինչպէս պղծւում չը լինի:
Ապրում է նա ահա քանի դարեր: Ապրում է
խիտ գոհ, սիրոված ամենից, կուռք դարձած
թէ եկեղեցում, թէ պալատների ոսկեգոծ ա-
ռաստաղների տակ, թէ հրապարակներում:
Առանց նրան չէ կարող ապրել աշխարհը:
Ամենի բարեբարն է նա և իւրաքանչիւր օր,
իւրաքանչիւր րոպէ քանի միլիոն սրտեր է
հանգստացնում, քանի տեղ է վրա հասնում:
Սպանեցէք, կանչում է նա ամեն վայրկեան,
սպանեցէք ինչի՞նչ, հաւատ, արդարութիւն:
Սպանեցէք անխնայ Մի վախճե՛ք, մի ամաչե՛ք:
Եւ բաւական եմ եւ ձեզ կը դարդարեմ, ես
ձեր երեսին իսկ կը հանեմ, ես կը ծեծեմ ձեր
կտրված, ծայրայեղ գէտը: Նոյն իսկ արտա-
ստնքներ կը դառնան և կը գործում ձեր աչ-
քերից: Դուք են գործը տեսէ՛ք, դուք ձեր
արտասերը, ձեր կեղտերը ձեր մէջ պահեցէ՛ք:
Ինչ թողէք ամեն հոգա, ես կիմանամ թէ ինչ-
պէս ցոյց տամ ձեզ:

Եւ ահա նա ցոյց էր տալիս այս սուրբ գի-
շերն էլ: Եւ անասելի բաւականութեամբ հարց-
նում է. «Ի՞նչն է պակաս»:

րած, արեւկայական հակումներով թափառական
ընկած մի հատիկ որդուց միլիթարութիւն չը
գտած և այդ հիշտիկ կսկիծից «սարսափ» դա-
ռած գիծ Նիթարը մի անգամ, աշխարհային մի
մտալ որովայն երեկոյան, միջնաշրջան, անցնում
էր Թ. փողոցով դարձեալ բարկացած, յուզված
անէծքներ թափելով, երբ նրա աչքով ընկան
փողոցի մի կողմում միմեանց ձեռք բռնած և
մաղող անձրեկի թրջված, կուշ եկած երկու մա-
նուկներ: Նրանք զոգողորում էին, արթնթում
առանց մի բառ արտասանել կարողանալու:
Մանկական աչքերից դուրսող արտասուքները
միայն խօսում էին թշուառութեան փոխարէն:
Շատ ու շատ անցորդներից գիծ Նիթարն էր
միակը, որ մօտեցաւ նրանց առանց մի բան
հարցնելու և ընտել ձեռքներից ու ձգեց: Մը-
խիթարիկ, փաղաքական խօսքերից զուրկ Նի-
թարը, որպէս պատասխան այդ չորս արտաս-
ուող աչքերի միմիայն մի զոյգ արտասուքներ
կաթեցրեց իր աչքերից:

Հողմը քել բերել էր թիւրքական գաղա-
նութիւններից փախած գաղթականութեան մի
բեկոր, որից երկուսն ուր մասնակիներ մնա-
ցել էին հեռու այս աշխարհում: Ահա այդ-
պէս էր կազմվել գիծ Նիթարի ընտանիքը:
«Մամէ ջան, քնում ենք», թանձր խաւարի
մէջ լսելի եղան մանկական ձայներ:
Գիծ Նիթարը մօտեցաւ նրանց, առաւ մաշ-
ված վերմակի տակ և սեղմելով իր կրծքին,
քնացրեց: Անցնում էր ճրագաւորի գիշերը:
— Բար ու քանդ ընի, աւերակ թող դառ-
նայ, ամենքը, ամենքը թող կտորվեն: Յուրա-
նկուղի մէջ տարածվեց յանկարծ Նիթարի աղա-
ղակը:

Բայց նա քնած էր. և քնի մեջ էլ նա հայ-
հոյում, անիծում էր, քնի մէջ էլ հանգիստ չէր
նրա հոգին:

Նրանից բարձր, ձեռնադրեալ խաղաղ օդի մէջ,
լուծւում են տիւր, հառաչող ձայներ: Դրանք
պատասխան չեն աշխարհի փառաւոր հերոսի
հարցին: Դրանք հարցեր, ցաւաքին հարցեր են:
— Ո՛ւր է Ծնվածը, հարցնում են նրանք:
Եւ որոնում են: Արեւօք որ կողմում, երկրի
որ անկիւնում է այդ գիշեր տալում Ծնվածը:
Որոնում են երկար, որոնում են կարօտա-
գին: Ահ, որքան վիշտ, որքան դաժնութիւն
այդ ձայների մէջ:

Ո՛ւր է Ծնվածը:
Հարցնում է արնաքամ մի ամբողջ ժողո-
վուրը իր սպանդանոցի խորքից. հարցնում է
իր բերանը որը մանուկների, իր բռնաբար-
ված կոյսերի, իր անտէր թափառական տղա-
մարդկանց, աշխարհից աշխարհ ընկած փախա-
տականների բերանով:

Գոնէ այս գիշեր մարդիկ իրանց մէջ տեղ
տալին Ծնվածին, որպէս զի լսելի լինէր այդ
բերանը հալածականների, անբախտների բե-
րանով արձակված հարցը: Գէթ մի գիշեր...

Ո՛ւր է Ծնվածը:
Նա առաջ որ ստրկութիւն չը լինի. նա բո-
լոր, բոլոր մարդկանց եղբայր անուանեց, մի
հօր որդիներ: Այժմ որքան քաղաքներ, Աշ-
խարհ հեծում է նրանց շրթանների շաշինից:
Թափված են նրանք մեծամեծների դռներին,
թափված են հրապարակներում, ոտների տակ
կոխկոտւում են, և նրանց մորմուքը, նրանց հա-
ռաչանքը առաջվայ պէս տիրողների լիւր քրքիջն
է դուրս հանում: Այս գիշեր, գոնէ այս գիշեր
թուլանար չլինում:

Ո՛ւր է Ծնվածը:
Նա պատուիրեց, որ կարող անկարողին մի
բաժան ցուրտ ջուր ապշ Եւ այժմ, այս սուրբ
գիշերը, որքան տապալկոյններ կան: Փոխված
են նրանք ամեն կողմ, երկրի մեծ մասը ըսելի
են իրանց մերկ մարմիններով, քաղցից ու
ծարաւից առաւել են կրճատեցնում, կոտոր-
վում են, բայց չեն վերջանում: Դժբախտու-
թիւնը անծայր է, նա վերանորոգվում է ան-
դադար, ծնվում, ծովանում է ամեն օր: Արատ-
նակը, զղուշը վիշտը ուտում են նրանց
մարմինը ու հոգին, իսկ վերններից մի կտոր
չոր հաց են չարում նրանց:

Եւ այսպէս որոնում էին Ծնվածին: Որոնում
էր հարստանարված թոյլը, որոնում էր ան-
պատեւած սրբութիւնը, որոնում էր գոհը, որո-
նում էր գայլի բարոյականութեան մատնված
զառը: Որքան որոնողներ:

Եւ ոչ ոք չէ ասում նրանց, թէ ուր է Ծն-
վածը: Ոչ ոք չը գիտէ նրա տեղը:

Կէս գիշերն անցնում է: Երկրի վրա մարում
են ցոյցերի վերջին ձայները: Իսկ վերեւում դեռ
որոնում են:

ՄԱՍՈՒԼԻ ԾՈՒԵԼՆԵՐԸ

Յունուարի 2-ին լրացաւ 200 տարին այն օ-
րից, երբ լոյս տեսաւ առաջին ռուս լրագրի
առաջին համարը: Ուղիղ երկու դար արանից
առաջ չարժից Գուտտենբերգի այն ժամանակ
դեռ չը կատարելագործված մեքենան լոյս ըն-
ծայելու այն փորձը, որը անսպառ մտաւոր
պաշար էր մատակարարում երկար տարիների
ընթացքում արեւմտեան Եւրոպային, իսկ այդ
օրվանից և Ռուսաստանին Պետրոս Մեծի ան-
թիւ խոշոր գործերից մէկն էլ՝ լրագիր հրա-
տարակելն էր. դա իսկապէս լրագիր չէր, այլ
պաշտօնական կարգադրութիւնների և հրա-
հանգների ժողովուրդային դրվում լը-
նթարութեան հիմքը, այդ էլ բաւական էր:

Ով չէ յիշում այդ խոշոր վերածնութեան
անմոռանալի դարերից իր բոլոր մանրա-
մասնութիւններով, Ինչ վիճակի մէջ էին այն
ժամանակվայ նորամուծութիւնների հերոսնե-
րը: Եւրոպական այն ժամանակվայ քաղաքա-
կրթութեան աւազանում մկրտված Պետրոս
Մեծը, նոր ոտք դրած իր հայրենական գահի
վրա, հազար ու մի հոգեւոր ունէր. նա պէտք է
պատուհան բանարձ դէպի Եւրոպան, նա
պէտք է անդործութեան, անբարոյականու-
թեան մէջ թաղված իշխանաւորներին քնից
արթնացնէր, պէտք է զարկ տար ուսմանը,
աւելորդին արհեստին, որոնք այնքան ընկած էին
Ռուսաստանում: Դա հեշտ բան չէր, դա հերո-
սութիւն էր այն ժամանակ, երբ միւրեք խու-
զելը անաստուածութիւն էր համարվում, ամեն
մի նորոգութիւն տեսնող ռուս ժողովուրդը
գոչում էր, թէ նեղը ծնվել է: Լճացած էր ա-
մեն ինչ, կենսը իր բոլոր խաւերում, նեխ-
ված և մոլորված էր ազնականութիւնը, ճնշ-
ված եւ քամված տգէտ ժողովուրդը:

Ահա այդպիսի մի ժամանակ սկիզբ դրվեց
եօթներորդ հօր պետութեանը. լոյս տեսաւ
„С. Петербургскія Вѣдомости“ լրագրի ա-

Ո՛ւր է Ծնվածը:
Նա հալածում էր կեղծաւորներին: Նա խա-
րաղանով վնդեց սրբութեան տաճարը ա-
ւազակների այդ դարձնադրերին: Փարիսեցին
իր բարեպաշտութիւնը, իր սրբութիւնը հրա-
պարակներում ցոյց տալու համար ծածկում էր
իր դէմքը, որպէս թէ մարդկանց չէր ուզում
տեսնել: Նա իր ձակաւոր խիտ էր պատերին,
պատում էր և այդ նշանը պիտի ցոյց տար
մարդկանց թէ որքան սուրբ են նրանք: Բայց
Ծնվածը մերկացրեց նրանց, մերկացրեց ձեւ-
կան բարեպաշտութեան տակ թաղնված սև
հոգին, նրանց գաղափարի արարքները: Ո՛ւր է
Ծնվածը:

Աշխարհի պաշտպան ծէսը, նա, որ այնքան
ժպտուն ու ինքնագոհ էր այդ գիշերը, ցած
իջաւ Լսեց նա այդ հարցը: Լսեց, այո, բայց
գիտէր, որ Ծնվածը չը կայ մարդկանց մէջ,
գիտէր, որ խարազան գործած ածող, սուրբ խօս-
քով պատմող չը կայ: Եւ հանդիստ ու ապա-
հով իր վերաբերում փոքր աշխարհի վրա: Հան-
գստութիւն. վաղը պիտի շարունակվի տօնը:

Ո՛ւր է Ծնվածը:
Ոչինչ պատասխան: Ներքեւում քնած էր փա-
րիսեցի աշխարհը:

Լ.

ԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինչ է տուել մեզ հայ գրականութիւնը
1902 թւին:

Հայ գրականութիւնը ամբողջով է գլխա-
ւորապէս հայ մամուլի մէջ և մեր հասարա-
կութիւնը իր գրական, մտաւոր անունը ստա-
նում է գլխաւորապէս մամուլից: Գրքեր կամ
շատ քիչ են լոյս տեսնում, կամ լոյս տեսած
ներն ևս շատ քիչ են տարածվում և կարգա-
վում: Մեծ բարեբաղդութիւն է համարվում,
եթէ մի հայ գրքը հրատարակութեան առաջին
տարվայ ընթացքում տարածվի գոնէ 5—600
օրինակ: Այդ ամօթխիթար երևոյթի մի գլխա-
ւոր պատճառն ևս այն է, որ մեր մէջ գրքեր
տարածելու գործի կազմակերպութիւնը սաղ-
մային գրութեան մէջ է. ժողովուրդը գաւառ-
ներում և գեղեցիկում ամենին հնարաւորու-
թիւն չունի գրքեր ձեռք բերելու, հնարաւո-
րութիւն չունի ոչ միայն ձեռք բերելու, այլ
և ընտրութիւն անելու: Եւ հէց այդ պատճա-
ռով յաման լաւ և օգտակար գրքերը մնում են
հրատարակչների, հեղինակների մօտ կամ
գրամատակցութեան և չեն տարածվում, իսկ
վատ, վնասակար գրքերը կարողանում են մուտք
գործել ժողովրդի մէջ: Չնայ կարող ասել, ի
հարկէ, որ մեր մէջ մամուլը, օրագրութիւնը
սպանում է գրքը, բայց այն գլխաւոր աղբիւ-
րաւորն է:

Մեր թէ նպատակից և թէ ոյժերից վեր է
անել լրագրութեան ոչ միայն պատմութիւնը,
այլ և յիշել նրա նշանաւոր ժամանակակիցները:
Սկսած այն ժամանակից լրագրութիւնը աճեց,
մեծացաւ, զարգացաւ, պաշտօնական հրահանգ-
ներին փոխարինեցին պետական, հասարակա-
կան, գրական հարցերի քննութիւնը, հետա-
գոտութիւնները, հրապարակ եկաւ հրապարա-
կականութիւնը, դա էլ իր տեսակի մի նորու-
թիւն էր, որի հետ այն ժամանակի ընաւ, իսկ այժմ
էլ չափազանց չեն հաշտվում: Այնքան, չիտակ հրա-
պարակականութիւնը, իրերին իր իսկական ա-
նուն տալը, վատը, չարը հարուածելը այժմ էլ
թշնամի է չափերին, այժմ էլ ծակում է չափե-
րի աչքերը, ինչպէս արեւակի ճառագայթները
մարդու աչքերը: Դրանից միշտ խորշում են
մարդիկ, երես են դարձնում...

Մամուլը, ընդունված է ասել, եօթներորդ
հօր պետութիւնն է: Բայց այդ մամուլը դեռ
նոր պէտք է իր համար երկիրներ նուաճէր,
պէտք է նոր սահմաններ գրաւէր: Հեշտ է եր-
կիրներ նուաճելը, հեշտ է մարդկանց սրտերը,
այդ ապառաժ ստացարանը հալեցնելու չափ
տաքացնելը: Անկասկած, ոչ, բայց որովհետեւ
այդ նպատակը սուրբ էր, հարկաւոր էր դրան
հասնել, իսկ դրա համար պէտք էր զոհեր տալ,
զոհեր անվերջ, նահատակներ անթիւ: Հայա-
մանքներ, հարուածներ, քառու զրպարութիւն-
ներ, — դրա հետեւանքը—անթիւ անհամար զի-
ւակներ, սիրած, պաշտած զինուորների անժա-
մանակ կորուստ և այլն:

Մեզանում, Ռուսաստանում, այլ պայմաննե-
րում է գտնվում մամուլը: Դա մասնատու Եւրո-
պայի հետ, որտեղ խօսքը ազատութիւնը վեր է
ամեն բանից: Եւրոպական լրագրութիւնը ունի
իր պատկառելի պատմութիւնը. այնտեղ լրա-
գիրը մի անաղիլ ոյժ է, որի հետ այսպէս թէ
այնպէս պէտք է հաղթել Մեզանում այդպէս
չէ. մամուլը, լրագրութիւնը, դրա հետ և նրա

ըր, որտեղից ժողովուրդը յագեցնում է իր մը-
տաւոր, հոգեւոր-բարոյական ծարաւը, առայժմ
մնում է մամուլը:

Արդ, ինչ է եղել հայ մամուլի կերպարանքը
1902-ին:

A tout seigneur, tout honneur, տուել է
Փրանսիական առաժը: Հայ ամսագրական մա-
մուլի առաջ օրգամը հանդիսանում է Էջմիած-
նի «Արարատը». նա հրատարակվում է արդէն
35 տարի, ուստի և չենք կարող առաջնութիւ-
նը նրան չը տալ: Բայց մեր քիչ բան ունենք
ասելու նրա մասին: Երեսուն հինգ տարվայ
ընթացքում «Արարատի» պէս նպաստաւոր
պայմաններում գտնվող մի ամսագիր պէտք է
նշանաւոր տեղ գրաւէր հայ ժողովրդի մտա-
ւոր և հոգեւոր-բարոյական զարգացման գործի
ու հայ գրականութեան մէջ, պէտք է ահագին
զարկ տուած լինէր հայ ժողովրդի մտաւոր և
բարոյական վերածնութեան, բայց, աւաղ, նա
ներկայացնում է այսօր մի կիսամեռ, կիսա-
կենդան մարմին: Եւ համարձակ կարելի է ա-
սել, որ «Արարատը» առերի փայլուն ժամա-
նակներ է ունեցել, երբ Էջմիածինը զուրկ էր
կրթված, զարգացած, ուսումնական վարդա-
պետներից, քան 1902-ին, երբ մեր աչքը չա-
րունակ կամենում են ծակել գիւլօրմուր, ու-
սումնական, աստուածաբան հոգեբաններով:
Էջմիածնի այդ մեծագործը իմաստունները չը
կարողացան նոյն իսկ այնքան չնորձ ցոյց
տալ, որ Մայր Աթոռի պաշտօնական օրգանը
կարողանայ գոնէ կանոնաւոր հրատարակել,
և որքան մեզ յայտնի է, 1902 թուի հոկտեմ-
բեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների հա-
մարները դեռ չեն հրատարակված:

Եւ որպիսի հակապատկեր մի այլ վանքի
ամսագրի հետ, «Բաղմուկ»-ի հետ, որ նոյն
պէս հրատարակում են վանականներ: Կը
գտնվի արեւօք մի հայ գրագէտ, որ հերքէ
վերնտիկի Միլիթարեան կամ թոյլի վարդապետ-
ների ձեռքով հրատարակվող այդ ամսագրի
գործած նկատելի աղբեցութիւնը հայ ժողովու-
րի մտաւոր և բարոյական վերածնութեան վրա:
Մամուլանքը բեղմնաւոր եղաւ «Բաղմուկ»-ը
1902-ին և ընդհանուր համակրութիւն ձեռք
բերեց իր նոր, խելացի աշուղութեամբ, օգ-
տակար յօդուածներով, մինչև այն աստիճան,
որ լուսաւորչական-ազգային եկեղեցու Պետ
ևս սկսեց աշխատակցել այդ ամսագրին: Եւ
Միլիթարեան համետ, ժրջման վարդապետ
ները ցոյց տուեցին Էջմիածնի դիպուկաւոր
վարդապետներին, թէ ինչ գեղեցիկ գործ կա-
րող են կատարել նրանք հայ հրապարակախօ-
սութեան անդառնալուստ, ինչպէս կատարել են
գրականութեան ապագայը:

Ոչ նուազ աշխատասէր են եղել և Վիճնայի

աշխատակիցները հալածված, արհամարհված են:
Մեզանում լրագրական գործողին ցոյց տուած
համակրանքը (բացառութիւնները մի կողմ)
կեղծ են, խաղաղիկ. նրանք ոչ մի հաւատ չեն
ներշնչում: Բացառութիւնները չեն կազմում մե-
զանում ժողովաւորական գաղափարների հա-
րուածներով հիւրասիրելը, վերաւորելը, նոյն
իսկ սպանելը: Լրագրական գործիչը, քանի դեռ
նա ապարդէջ ունի գրելու, մի կերպ տանելի
է, նրան, ինչպէս ասում են, վաճառչաւորի,
զինաւորի: Բայց վայ, ի՞նչ, եթէ նրա ձեռքից
դուրս արծաւ գրելու գէշը, նա գրվելից ա-
պարդէցի: Այն ժամանակ նոյն ի՞նչ թէ նրան
յարգող հասարակութիւնը իր բոլոր թոյլը
թափում է նրա վրա: Դառն, թուշաւոր է այդ
ապարդէղը, որքան նա տա սուրբ է, դադարաւո-
րան, նոյնքան նա տա վնաս, փառացու է իր
տիրող համար: Օրինաւոր կերպով չէ վարձատր-
վում նա, մի կարգին օր չէ քաջում իր գոր-
ծունէութեան ժամանակ, կենսաւոր միշտ խորթ
զաւակին վայել պատիւ է գտնում, և չը նա-
յելով դրան, նա լուսն ու մուշ շարունակում
է իր խոշոր քաղաքականութիւնը դերը: Նա անխնայ
մերկացնում է փարիսեցիներին, նա ամալիս
կերպով հրապարակ է հանում ուժեղների ան-
կարգութիւնները՝ թոյլերին ճնշելու ժամանակ
և, չը նայելով դրա համար ստացած զօրեղ
հարուածներին, նա, աներեսի նման, նոյն հե-
ղութեամբ իր գործն է շարունակում:

Անկասկած, գալու է մի ժամանակ, թէ և
չատ ուշ, երբ սերունդներից մէկը կը հասկա-
նայ իր հետաւոր նախնիքների արած ծառայու-
թիւնները: Բայց դա մի անորոշ ժամանակի
ինչի՞նչ է, իսկ մինչ այդ ժողովաւոր, լրագ-
րական գործիչը, կը մնայ նոյն վիճակում, բայց
գիմարդկուն մշակ և ճակատագրական հեղու-
թեամբ առաջ կը տանի իր գրիչը...

Ռ. Յովհաննիսնանց

Բաղու

Նանաների մինիստրին. «Սերգեյ Իււլիիչ: Տառը
տառեւ առաձ է Տէր հանրապետս Իմ յշնորդ

„ՄՈՒՐՃ“

1903 Թ. Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ծանօթութիւն. Ուլ գոտարանում է տարեկան բաժանորդագիրը (10 ր.) վճարել միանշանակ՝ կարող է տալ մ ա ս - մ ա ս, —սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. եւ յուլիսի 1-ին մընացած 2 րուրին: Ապագին կամ ծրի ամսագիրը ոչ սքի չէ ուղարկվում:

УСЛОВІЯ ПОДПИСКИ: съ доставкою и перешлюю 3 рубля въ годъ.
Подписка принимается въ редакціи газеты „КАРСЪ“, въ гор. Карсѣ, куда адресу-
ють свои требованія и иногородные. 2—3

Ррлж. Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. 4—4

Редакторъ-издатель А. Н. Давровъ.

Дозволено Цензурою, Тифлисъ, 4 Января 1903 г.

LEO

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

[illegible]

ԲԱՆԴԱՎՈՐ Բաժանորդ կարգի է գրվել պ. Իրիգոր Տէր-Տովհաննիսեանի մօտ, Ա. Մա-
տուրովի գրասենեակում:

Հոգաբերան Զեմարանի Արեւելեան Լեցուաց, Մօսկվա.

Վերադառնալու ձեռնարանի պրոֆ. Վ. Միլեր

2-2

Ժամանակակից հայաստանի հիմնական համարի կազմով և կազմակերպությամբ, անհատական և խմբակային մեթոդներով, հիմնականում ԳիՆՆ և 3 ր. 50 կողմէ: (Կ. Կ. Կ.) 10—25

ԱՐԻԼԿ ԱՐԵՐ ԱՐԴԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԵՂԱԿ Ե

91—100

Электротечная Груз. Издат. Т-ва, Б.-Ванская ул.